ԼԻԳԱ Ինշուրանս ԱՓԲԸ

«ԼԻԳԱ» անվանական կրթաթոշակ

Գիտելիքով զինված ուսանողին աջակցելը մեր ընկերության բիզնես-մշակույթի մի մասն է կազմում: Հայաստանում մեր գործունեության առաջին իսկ տարվանից ապահովագրություն ուսումնասիրող ուսանողներից լավագույններին մենք շնորհում ենք **«ԼԻԳԱ» անվանական կրթաթոշակ**:

Այս տարի ընտրված ուսանողները կստանան.

- տվյալ ուսումնական տարվա ընթացքում տվյալ **ուսումնական տարվա վարձի 50%-ի չափով կրթաթոշակ**
- հնարավորություն առաջնահերթության կարգով մասնակցելու Ընկերության կողմից իրականացվող տարբեր ծրագրերին
- իրենց նախընտրելի մասնագիտական բաժիններում ստաժավորում անցնելու
- ինչպես նաև առաջնահերթության կարգով մասնակցելու թափուր հաստիքների համար հայտարարված մրցույթներին:

Ո՞վ կարող է ստանալ «ԼԻԳԱ» անվանական կրթաթոշակ

Կրթաթոշակին կարող են հավակնել 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր հետաքրքրված են ապահովագրությամբ, մեծ ցանկություն ունեն «ԼԻԳԱ Ինշուրանս» ընկերությունում կառուցելու իրենց աշխատանքային կարիերան և զարգացնելու ապահովագրության ոլորտը Հայաստանում:

Ի՞նչ կտա Ձեզ մասնակցությունն այս մրցույթին

- Ֆինանսական աջակցություն՝ տարեկան վարձավճարի 50%-ի չափով
- ԼԻԳԱ Ինշուրանսի տարբեր բաժիններում ստաժավորում անցնելու հնարավորություն /մինիմալ շաբաթական 20 ժամ/:
- Հնարավորություն ծանոթանալու ԼԻԳԱ Ինշուրանսի կորպորատիվ մշակույթին՝ հետագայում դրա մի մասը կազմելու հեռանկարով
- Աշխատանքային փորձի ձեռքբերում
- Հնարավորություն կողք-կողքի աշխատելու Հայաստանի ամենախոշոր ապահովագրական ընկերության պրոֆեսիոնալների հետ և ձեռք բերելու պրակտիկ փորձ

Ինչպե՞ս ներկայացնել կրթաթոշակ ստանալու դիմում-հայտ

Դիմում-հայտը պետք է ներառի՝

- Դիմորդի ռեզյումեն
- Մոտիվացիոն նամակը
- ՄՕԳ
- Առաջադրանք՝ կամ շարադրություն /эссе/, կամ տեսահոլովակ, կամ շնորհանդես տրված թեմների շուրջ:

Մոտիվացիոն նամակում անհրաժեշտ է հակիրճ նկարագրել, ինչո՞ւ եք որոշել մասնակցել մրցույթին և ի՞նչու հենց Դուք պետք է ստանաք կրթաթոշակը, ի՞նչպիսի ներդրում կարող եք ունենալ ԼԻԳԱ Ինշուրանս ընկերությունում, ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր ապագան և այլն):

Շարադրությունը /эссе/, կամ տեսահոլովակը, կամ շնորհանդեսը պետք է ներկայացված լինեն ստորև թեմաներից որևէ մեկով ՝ 1 էջի սահմաններում /800 սիմվոլ/ կամ 5-7 րոպե տևողությամբ, շնորհանդես՝ մինչև 15 slide:

Թեմաներ

- Նոր պրոդուկտի առաջարկ՝ ներառելով բացառիկ վաճառքի առաջարկի գաղափարը (Unique selling proposition)
- ՀՀ ապահովագրական շուկայում գործող ընկերությունների SWOT վերլուծություն
- Արհեստական ինտելեկտի կիրառումն ապահովագրական ընկերությունների ռիսկերի կառավարման գործընթացում
- Ապագայի ապահովագրական ընկերությունը
- Ապահովագրական ընկերության հաճախորդների համար Mobile հավելվածի առկայություն: Առավելություններ և ռիսկեր
- CRM համակարգի օգտագործմամբ ապահովագրական ընկերության հաճախորդների սպասարկման առավելությունները
- Ազատ թեմա ապահովագրության մասին

Դիմում-հայտն անհրաժեշտ է ներկայացնել 1 փաստաթղթով:

Ընտրության փուլերը.
Դիմում-հայտերի դիտարկում
Խմբային հարցազրույց
Պրակտիկ առաջադրանքներ/թեստեր
Անհատական հարցազրույց

Ոչ լիարժեք ներկայացված դիմումները չեն դիտարկվի:

Բոլոր մանրամասների և դիմելու համար հետևեք
https://www.liga.am/hy/career/e17cf484-6dbc-4f65-931e-04c6e4ca240e/scholarship
հղումին և լրացրեք հայտը: